ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը ՆՀ-125-Ն	Տեսակը Մայր
Տիպը Հրամանագիր	Կարգավիճակը Գործում է
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2006.06.14/31(486) Հոդ.616	Ընդունման վայրը Երևան
Ընդունող մարմինը ՀՀ Նախագահ	Ընդունման ամսաթիվը 01.06.2006
Ստորագրող մարմինը ՀՀ Նախագահ	Ստորագրման ամսաթիվը 01.06.2006
Վավերացնող մարմինը	Վավերացման ամսաթիվը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 24.06.2006	Ուժը կորցնելու ամսաթիվը

⊞ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ **2000** ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ **31**-Ի ՆՀ-**541** ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ **2000** ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ **31**-Ի ՆՀ-**541** ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2000 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության միասնական արտաքին քաղաքականության վարման գործում Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության մարմինների գործունեությունը համակարգելու մասին» ՆՀ-541 հրամանագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Հրամանագրի վերնագրում, նախաբանում, 1-ին կետի առաջին պարբերության երկրորդ նախադասությունում և երրորդ պարբերությունում «գործադիր իշխանության» բառերը փոխարինել «պետական» բառով:

2. Հրամանագրի 3-րդ կետը «Հայաստանի Հանրապետության միասնական» բառերից հետո լրացնել «արտաքին» բառով:

3. Հրամանագիրը 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-րդ և 3.2-րդ կետերով՝

«3.1. Պաշտոնական պատվիրակությունների այցի ծրագիրը և դրանով նախատեսված միջոցառումները նախապես քննարկվում և համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ:

3.2. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը կամ ներկայացուցիչը մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ղեկավարների և պաշտոնատար անձանց, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների և պատգամավորական պատվիրակությունների՝ օտարերկրյա պետություններում կամ միջազգային կազմակերպություններում տեղի ունեցող այն հանդիպումներին, միջազգային համաժողովներին և խորհրդարանական նստաշրջաններին, որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերի քննարկում և որոնց արդյունքում կարող են ընդունվել Հայաստանի Հանրապետության համար պարտադիր կատարման ենթակա բանաձևեր կամ որոշումներ, ձեռք բերվել արտաքին քաղաքականությանն առնչվող պայմանավորվածություններ, արվել արտաքին քաղաքականության հարցերի հետ կապված հայտարարություններ:

Սույն կետով նախատեսված հանդիպումներին, միջազգային համաժողովներին և խորհրդարանական նստաշրջաններին մասնակցելու մասին Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը, 10-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն է ներկայացնում դրանց արդյունքների վերաբերյալ հաղորդագրություններ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան առաջարկություններ:»:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ռ. Քոչարյան

2006 թ. հունիսի 1
Երևան
ՆՀ-125-Ն